# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՓԱՌԱՊԱՆԾ ՀՈԲԵԼՅԱՆԸ

Այս տարի նոյեմբերի 29-ին հայ ժողովուրդը տոնում է Սովետական կարգերի հաստատման 50-րդ տարեդարձը։

Երկար ու ձիգ դարերի ընթացքում հայ ժողովրդի մաքառումների ու պայքարի անհատում սյուժն է եղել ինքնուրույն պետականության ստեղծումը։ Հազարամյակներ շարունակ ժողովուրդը կենաց ու մահու կռիվ է մղել պահպանելու իր գոյությունը, իր հնամյա մշակույթը, իր ճարտարապետական կոթողներն ու մագաղաթները, իր լեզուն ու երգը։ Նրա հանճարով, համառ աշխատանքով ու անվեհերությամբ ստեղծածն ու կառուցածը միշտ վտանգի է ենթարկվել նենգ, ավերող ու թրատող բռնակալների կողմից։

Հոկտեմբերյան Սոցիալիստական հեղափոխության շնորհիվ հայ ժողովուրդը արդեն կես դար է ինչ նվաճել է իր իսկական վերածնության ռեալ հնարավորությունը։ Իրականացան նրա դարավոր երազները— այսօր նա ունի իր պետականությունը։ Սովետական միության հանրապետությունների համակարգում, ռուս ժողովրդի օգնությամբ Սովետական Հայաստանը միկընդմիշտ անառիկ դարձավ ոսոխների վայրագությունների առաջ։

Ընդամենը 50-տարում արմատական վերափոխումներ կատարվեցին հայ ժողովրդի պատմական ճակատագրում։ Վերակերտվեցին, նոր ծնունդ ու կյանք առան Հայաստանի բազմաթիվ քաղաքներ, երբեմնի տնայնագործ արհեստագործությանը փոխարինեց վորեղ արդյունաբերությունը, աճեց, ձևավորվեց և ամրացավ բանվոր դասակարգը ու տեխնիկական մտավորականությունը, կոռ ու բեգյարից հեծող հայ գյուղացիությունը սկսեց վարել առաջավոր տնտեսություններ, հիմնովին փոխվեց հայ բանվորի ու գյուղացու կենցաղը։

Այս վիթխարի տեղաշարժերի շարքում աննախընթաց վերելքի է հասել նաև գիտությունը։ Միայն սովետական կարգերի օրոք հայ ժողովուրդը ունեցավ իր համալսարանն ու Ակադեմիան։

Մեր երիտասարդությունը այժմ իր հայրենի հողում կարող է ձեռք բերել հարյուրավոր մասնագիտություններ։ Հանրապետությունը խիտ պատած է դպրոցների, բուհերի և տեխնիկումների ցանցով։

Անցած 50 տարիների ստեղծագործ աշխատանքի պայմաններում հայ ժողովուրդը գիտության, տեխնիկայի և մշակույթի շատ բնագավառներում դուրս եկավ լայն, միջազգային ասպարեզ։

Բնական գիտությունների շարքում մեզ մոտ ծաղկում ապրեցին նաև մաթեմատիկական գիտությունները։ «Հայկական մաթեմատիկական դպրոցը», կոմպլեքս և իրական փոփոխականի ֆունկցիաների տեսության, դիֆերենցիալ հավասարումների և ֆունկցիոնալ անալիզի բնագավառներում արժանի ճանաչում է գտել ինչպես Սովետական միությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։

Մշակութային, գիտական ավանդություններով հարուստ մեր հինավուրց ժողովուրդը լիցքավորված նոր եռանդով ընթանում է մարդկության առաջընթացի ուղիով։

Հայ ժողովրդի ամբողջ պատմության տրամաբանությունից ու փիլիսոփայությունից է բխում այն երջանիկ գիտակցությունը, որ Սովետական Հայաստանի 50-ամյակը դա մեր ժողովրդի մեծ ու նվիրական տոնն է։

## СЛАВНЫЙ ЮБИЛЕЙ АРМЯНСКОГО НАРОДА

29 ноября этого года армянский народ празднует 50-ую годовщину со дня установления Советской власти в Армении.

Армянский народ в своей многовековой борьбе всегда стремился обрести собственную государственность. Тысячелетия народ вел борьбу за свою независимость, за сохранение своей древней культуры, архитектурных памятников и свитков, языка и музыки.

Всему, что было создано гением и трудом народа, грозила постоянная опасность со стороны чужеземных насильников, вторгавшихся в страну и предававших все огню и мечу.

Благодаря Октябрьской социалистической революции, армянский народ вот уже полвека как приобрел реальную возможность подлинного возрождения.

Осуществилась его вековая мечта—сегодня он имеет государственность .С помощью русского народа, Советская Армения—в семье братских республик—стала неприступна для самых лютых ее врагов.

В исторической судьбе армянского народа—всего лишь за пятьдесят лет—произошли коренные перемены. Возродились, обрели новую жизнь многочисленные города, выросла могучая промышленность, окреп рабочий класс, сформировалась техническая интеллигенция. В корне преобразился быт армянского рабочего и крестьянина..

Одним из могущественных сдвигов в жизни армянского народа является невиданный подъем в науке. Только при советской власти армянский народ основал университет и Академию наук.

Ныне наша молодежь может получить любую специальность в родной республике, пронизанной сетью школ, техникумов и вузов.

Прошедшее пятидесятилетие дало армянскому народу возможность проявить себя на широкой международной арене,—во многих областях науки, техники и культуры.

В Армении наряду с другими естественными науками переживает расцвет и математика.

Армянская математическая школа в области теории функции комплексного и действительного переменного, а также дифференциальных уравнений и функционального анализа, получила достойное признание как в Советском Союзе, так и за его пределами.

Обогощенный традициями в науке и культуре наш народ движется по пути прогресса.

Анализ исторических судеб армян приводит к сознанию того, что 50-летие Советской Армении—это большой и священный праздник для армянского народа.